ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“ 3 ” հուլիսի 2013թ № 105 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՌՆԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթների և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» N108 «Ա» որոշմամբ Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղական համայնքում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգման արդյունքներով կազմված արձանագրության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Քաղաքաշինական գործունեության բնագավառում Բռնակոթ գյուղական համայնքում առկա խնդիրներին սահմանված կարգով լուծում տալու նպատակով համայնքի ղեկավարին առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել համայնքի վարչական տարածքներում հողահատկացման, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման, դրանց նախագծերի հաստատման, համաձայնեցման, ինչպես նաև ինքնակամ շինարարությունների կասեցման և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ տարվող գործընթացները՝ ապահովելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը.

2) համայնքի ավագանու նիստում քննարկել քաղաքաշինական գործունեության պլանային ստուգման արդյունքները և ձեռնարկված միջոցների մասին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴՈԼՈՒՆՑ

2013թ. հուլիսի 3
ք. Կապան